

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՇԻՆԱՐԱՐԸ

1993 թվականին լրացավ Մայր Աթոռի վաստակավոր շինարար, թիթեղագործ-փականագործ-երկաթագործ Սարգիս Հարությունի Պետրոսյանի Մայր Աթոռում աշխատանքային գործունեության 35-ամյակը:

Ս. Հ. Պետրոսյանը ծնվել է 1925 թ. հուլիսի 7-ին Երևանում: Սովորել է տեղի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1939—1942 թվականներին աշխատել է Երևանի բամբակամշակման գործարանում որպես վարորդ:

Հայրենական պատերազմը սկսվելուց մեկ տարի անց, 1942 թվականին, մեկնել է Խորհրդային բանակ և, պաշտպանելու համար հայրենիքը, երկար ժամանակ ճակատային գծում մարտնչել թշնամու դեմ:

1948 թվականի մայիսին, զորացրվելուց հետո Խորհրդային բանակից, աշխատանքի է անցել Երևանի նուրբ բրդյա գործվածքեղենի գործարանում որպես թիթեղագործ:

1958 թվականից առ այսօր Ս. Հ. Պետրոսյանն աշխատում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում որպես դարբին, փականագործ, թիթեղագործ: Նա ավելի քան երեսուն տարի բրիգադիրն է մետաղագործական արհեստանոցի:

Ս. Հ. Պետրոսյանի աշխատանքի արգասիքը հանդիսացող մետաղական բազմաթիվ մշակումներ (խաչեր, ջահեր, պատուհաններ, դռներ, դարպասներ և այլն) զարդարում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շատ ու շատ եկեղեցիներ և այլ շինություններ:

Ի նշան Սարգիս Պետրոսյանի երեսունհինգ տարիների նվիրյալ անբասիր աշխատանքի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տվեց իր հայրապետական հետևյալ կոնդակը.

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ

Աստուծոյ օգնականութեամբ անձանձրոյթ նուիրումով աւելի քան երեսուն և հինգ տարիներ շարունակ Դուք ծառայում էք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում որպէս մետաղագործ վարպետ-դարբին և Ձեր բարձրորակ աշխատանքներով զարդարած էք Մայր Աթոռս և բազմաթիւ եկեղեցիները, վանքերը և վանական շինութիւնները:

Ձերմապէս գնահատելով Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնը և բարձրորակ վարպետի շինարարական տաղանդը և նկատի առնելով երեք ու կէս տասնամեակի Ձեր կարգապահ ու անբասիր նկարագիրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ձեզ բերում ենք Մեր բարի մաղթանքներն ու օրհնութիւնը, աղօթքով, որ Տէրը պարգևի Ձեզի երկար տարիների խաղաղ և քաջառողջ կեանք, նորանոր շինարար իրագործումներով:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»: Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 23 Ապրիլի
1993 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1976